25.131

332
Ju-11

07 FEB 2010

ՀԱՅԿՈՈՊ—ՖԻՆ. ՊԼԱՆ ՍԵԿՏՈՐ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Համաձայն ԽՍՀ Միության Ժողկոմխորհի 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման)

332
Խ-11

ՅԵՐԵՎԱՆ 1936 Թ.

25.131
11.09.2013

Տեխ. ձեվավոր. լեվ արբագրիչ՝ ԱՐՇ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Սեվան-Զանգեզուրի Տպարան — Ռեկլամ-Հրատ Բյուրո

Գլավլիտ № 2184 — Պատվեր № 25—23 — Տիրաժ 500.

332
40507

ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մոսկվա—Կրեմլ
4-ն հունիսի 1936 թվ.

ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

1. Վերացնել վարկավորման գոյություն ունեցող այն կարգը, վորով Պետական Բանկն առևտրական կազմակերպություններին վարկավորում է բոլոր ապրանքների շրջանառության արագության դիմազուրկ միջին ժամկետով։

Սահմանել, վոր Պետական Բանկն առևտրական կազմակերպություններին վարկավորում է ակցեպտի յենթարկված հաշիվների դիմաց՝ շերտավորված ժամկետներով՝ համաձայն տարբեր շրջաններում ապրանքների զանազան խմբերի համար պլանով սահմանված շրջանառության արագության։

Առևտրական կազմակերպությունների վարկավորման շերտավորված ժամկետները յուրաքանչյուր յեռամսյակին հաստատվում են Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի կողմից, պլանները հաստատելիս։

2. Վերացնել գոյություն ունեցող այն կարգը, վորով վարկավորման հաստատուն լիմիտներ են սահմանվում յուրաքանչյուր առանձին առևտրական կազմակերպության համար։

Սահմանել, վոր առևտրական կազմակերպությունների վարկավորման ընդհանուր չափը վորոշում է Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդը՝ ամբողջ Պետբանկի համար։ Պետական Բանկի վարչությունը սահմանում է առևտրական կազմակերպություններին վարկավորելու չափն իր հանրապետական, յերկ-

բային ու մարզային գրասենյակների համար, իսկ վերջիններս՝ շրջանային բաժանմունքների համար։

Այն դեպքում, երբ Պետական Բանկի շրջանային բաժանմունքն առևտրական կազմակերպությունների համար լրացուցիչ վարկի կարիք ունենա, վարկն ավելացնելու հարցը լուծում է, Պետական Բանկի համապատասխան գրասենյակը, իսկ ամբողջ հանրապետության, երկրի կամ մարզի առևտրական կազմակերպությունների համար լրացուցիչ վարկ պահանջվելու դեպքում՝ վարկն ավելացնելու հարցը լուծում է Պետական Բանկի վարչությունը։

Մանրություն.—Պահպանել առևտրական կազմակերպությունների սեզոնային պաշարների և ժամկետից առաջ ներմուծված ապրանքների վարկավորման գոյություն ունեցող կարգը։

3. Սահմանել, որ Պետական Բանկն առևտրական կազմակերպություններին վարկավորում է այն դեպքում, երբ նրանք պահպանում են հետևյալ պայմանները.

ա) յուրաքանչյուր առևտրական աշխատանքը շահաբեր է, որը որոշվում է յուրամյակային հաշվեկշռով.

բ) յուրաքանչյուրն է, ապրանքների վաճառման մեջ սեփական միջոցների մասնակցության չափը, որը սահմանվում է ամեն մի յուրամյակի համար.

գ) յուրաքանչյուր վարկավորվողը ճշտապահ է յուրացել Պետական Բանկի առաջ՝ իր պարտավորությունների վճարման առումով։

Առաջարկել Պետական Բանկին՝ առևտրական կազմակերպություններին իրենց համար սահմանված ապրանքաշրջանառության պլանների գերակատարման դեպքում՝ պլանից ավելի շրջանառությունը վարկավորել ամբողջովին, առանց պահանջելու առևտրական կազմակերպությունների սեփական միջոցների մասնակցությունն ապրանքների վճարման մեջ։

4. Հանձնարարել Պետական Բանկի վարչությանը՝ առևտրական կազմակերպությունների վարկավորման այն կարգը, որը հիշատակված է 1—3 հոդվածներում, 1936 թվ. օգոստոսի 1-ից կիրառել Պետական Բանկի 500 գրասենյակների ու բաժանմունքների համար (ընդգրկելով ապրանքաշրջանառության առնվազն 2/3 մասը), 1936 թվ. հոկտեմբերի 1-ից՝ Պետական Բանկի 1500 գրասենյակների ու բաժանմունքների համար, 1937 թվ. հունվարի 1-ից՝ Պետական Բանկի ամբողջ սիստեմի համար։

5. Երկարաձգել մինչև 1937 թվ. հունվարի 1-ը Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի 1936 թվ. փետրվարի 17-ի № 78 վորոշման այն մասը, վորով Պետական Բանկը սպառողական ընկերությունների շրջանային միությունների միջոցով պետք է վարկավորի այն գյուղկոոպներն ու գյուղխանութները, վորոնց իրավունք չի տրված անմիջականորեն վարկավորվելու Պետբանկում։

6. Վերացնել հաշիվները 48 ժամվա ընթացքում վճարելու գոյություն ունեցող կարգը։

Սահմանել հետևյալ վերջնական ժամկետներն ապրանքները վճարելու համար.

ա) այլքաղաքային շրջանառության համար՝ 10 որ Բանկի կողմից հաշիվը (վճարման պահանջագիրը) ստանալուց հետո, ներառյալ յերեք որ՝ հաշիվը (վճարման պահանջագիրը) ակցեպտի յենթարկելու համար.

բ) ներքաղաքային շրջանառության համար՝ 4 որ հաշիվը բանկին ներկայացնելուց հետո (1000 ռուբլուց ավելի գումար պարունակող հաշիվների համար)։

1936 թվ. օգոստոսի 1-ից Մոսկվայում, Լենինգրադում և Կիևում և 1936 թվ. հոկտեմբերի 1-ից բոլոր վայրերում՝ ներքաղաքային շրջանառության մեջ 1.000 ռ. ավելի գումար պարունակող հաշիվների (վճարման պահանջագրերի) նկատմամբ տարածել վճարման ու վարկավորման այն կարգը, որը սահմանված է այլքաղաքային շրջանառության համար, այն հաշվով, որ մատակարարները ներկայացնեն Պետական Բանկին գնորդի կողմից ակցեպտի յենթարկված հաշիվները (վճարման պահանջագրերը)։

7. Պահպանել հաշվարկի այն կարգը, որը կիրառվում է հացամթերքների, հացահատիկային ողու, նավթամթերքների նկատմամբ և բյուջետային ու հասարակական կազմակերպությունների մատակարարումների համար, ինչպես և այն կարգը, որի համաձայն կատարվում են հաշվարկները արտադրական ձեռնարկությունների և համապատասխան վաճառահանման այն կազմակերպությունների միջև, որոնց միջոցով նրանք իրացնում են իրենց արտադրանքը։

8. Պարտավորեցնել Պետական Բանկին՝ ապրանքների ու ապառարկությունների համար վճարումների ժամկետների յերկա-

բաձգման համաձայն՝ յերկարաձգել մատակարար—տնտեսամինների տրվող վարկի ժամկետները և կրճատել գնորդ—տնտեսամիններին տրվող վարկի ժամկետները, թե այլքաղաքային և թե ներքաղաքային շրջանառության համար։

9. 1936 թվ. հուլիսի 1-ից իջեցնել ճանապարհում գտնվող գումարների վարկավորման տոկոսային դրույքը 4%-ից 2%-ի։

10. Ի փոփոխումն ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թվ. օգոստոսի 17-ի վորոշման՝ «Չվճարված բեռների գնորդների կողմից պատասխանատու պահպանման մասին» (ԽՍՀ Միության Որենքների Ժողովածու, 1931 թ. № 58, հոդված 243), սահմանել, վոր գնորդի կողմից ապրանքի օգտագործումը թույլատրվում է հաշիվն ակցեպտի յենթարկելու պահից։

Պետական Բանկին իրավունք է վերապահվում ապրանքը պատասխանատու պահպանման հանձնելու այն գնորդներին, վորոնք չեն վճարում ակցեպտի յենթարկված հաշիվները (վճարման պահանջագրերը), կամ մատակարարների ցուցմունքով այդ ապրանքն ուղարկել այլ գնորդների հասցեյով։

11. Սահմանել, վոր այն դեպքում, յերբ Պետական Բանկն իր բաժանմունքից տեղեկություն չի ստացել, թե գնորդը հրաժարվել է հաշիվն ընդունելուց կամ գնորդը փող չունի, Բանկը կարող է ճանապարհին գտնվող գումարների դիմաց տրված վարկը դանձել՝ գնորդից փողը փաստորեն ստացվելուն զուգընթաց։

12. Սահմանել, վոր Պետական Բանկի բաժանմունքները կարող են վարկավորումից հանել ձեռնարկություններն ու կազմակերպությունները յետևյալ կերպ՝

ա) միութենական որգաններին յենթակա ձեռնարկությունների ու կազմակերպությունների նկատմամբ՝ Պետական Բանկի վարչության նախագահի թույլտվությամբ, դրա մասին Բանկի կողմից համապատասխան Ժողովրդական Կոմիսարին հաղորդվելուց 5 որ հետո.

բ) հանրապետական ու տեղական որգաններին յենթակա ձեռնարկությունների և կազմակերպությունների նկատմամբ՝ Պետական Բանկի համապատասխան գրասենյակի կառավարչի թույլտվությամբ՝ 5 որ անց այն որից, յերբ Բանկը դրա մասին հաղորդում է այն որգաններին, վորոնց գերատեսչության տակ են գտնվում այդ ձեռնարկությունները կամ կազմակերպությունները։

13. Այս վորոշմամբ սահմանված վարկավորման ու հաշվարկների կարգը մտցնել 1936 թվ. օգոստոսի 1-ից, բացի այն ժամկետներից, վորոնք մատնանշված են 4-րդ և 6-րդ հոդվածներում։

Պարտավորեցնել Պետական Բանկին՝ համաձայնեցնելով ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի և մյուս շահագրգռված Ժողովրդական կոմիսարիատների հետ մինչև 1936 թվ. հունիսի 10-ը մշակել և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին ներկայացնել ի հաստատություն մի հրահանգ՝ այս վորոշումն իրագործելու համար։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
գործերի կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ
4-ն հունիսի 1936 թվ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

№ 284, 11 հուլիսի 1936 թվ.

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման՝ «Ապրանքաշրջանառության վարկավորման սիստեմը փոփոխելու մասին» 1-ին հոդվածի հիման վրա Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդը վորոշում է.

1. Հաստատել ապրանքների շրջանառության արագության շերտավորված ժամկետները քաղաքային առևտրի համար, գյուղական մանրածախս առևտրի համար և գյուղական մեծաքանակ առևտրի համար, համաձայն կցված տախտակի։

Պարտավորեցնել Պետական Բանկին համաձայնեցնելով ԽՍՀ Միության ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի և Ցենտրոսոյուզի հետ բաժանել այդ շերտավորված ժամկետները ըստ հանրապետությունների, յերկրների և մարզերի։

2. Սահմանել հետևյալ կարգը շրջանառության արագության շերտավորված ժամկետների ու վարկավորման մինչև առանձին վարկավորվող կազմակերպություններին հասցնելու համար.

ա) Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակը՝ համաձայնեցնելով հանրապետական, յերկրային կամ մարզային ներքին առևտրի բաժնի պետի հետ և մասնակցությամբ առևտրական սիստեմների համապատասխան կենտրոնների՝ Պետական Բանկի վարչության կողմից տված ապրանքների առանձին խմբերի շրջանառության արագության ժամկետների հիման վրա սահմանում է շրջանառության արագության շերտավորված ժամկետներ առանձին վարկավորվող առևտրական կազմակերպությունների համար.

բ) Պետական Բանկի բաժանմունքը վարկավորում է առևտրական կազմակերպությանը շրջանառության արագության այն ժամկետներով, վորոնք սահմանվում են «ա» կետի կարգով ապրանքների առանձին խմբերի համար, դուրս գալով 7 օր այլ քաղաքային շրջանառության համար և 4 օր ներքաղաքային շրջանառության համար։

Հացամթերքների, նավթամթերքների և ողջ դիմաց փոխատվությունը տրվում է շրջանառության արագության այն ամբողջ ժամկետով, վորը սահմանված է Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակի կողմից։

3. Պարտավորեցնել այն կազմակերպություններին, վորոնք ապրանքը վաճառում են առևտրական կազմակերպություններին, դուրս գրելու առանձին հաշիվ—ֆակտուրաներ ըստ ապրանքների ամեն մի խմբի, վորի համար սահմանված է շրջանառության արագության հատուկ ժամկետ։

Թույլատրել Պետական Բանկին չտալ ապրանքների մատակարարներին փոխատվություն ճանապարհում գտնվող փատաթղթերի դիմաց այն դեպքում, յերբ նրանց կողմից հաշիվ-ֆակտուրաները դուրս են գրված խախտելով սույն հոդվածի կանոնը։

Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի
Նախագահի տեղակալ՝ Վ. ԶՈՒԲԱՐ
Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի
քարտուղարի փոխարեն՝ Ի. ԲՈԼՇԱԿՈՎ

Հավելված ԱԳԽ 11/VII—36 թ. № 284 վորոշման.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

ԱՊՐ. ՇՐՋԱՆ. ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՐԵՐՈՎ

Ապրանքների խմբերը	Քաղաքային առևտրում	Գյուղական մանրածախս առևտրում	Գյուղական. մեծաքան. առևտրում
I ԽՈՒՄԲ	15	15	7
1. Միս և մսեղեն,			
2. Կաթ և կաթնամթերքներ, ձու			
3. Կերոսին (տես ծանոթությունը),			
4. Բամբակյա գործվածքներ։			

Ապրանքների խմբերը	Քաղաքային առևտրում	Գյուղական մանրածախս առևտրում	Գյուղակ. մեծաքան. առևտրում
II ԽՈՒՄԲ	24	20	13
1. Ցուղ կենդանական և բուսական,			
2. Ջուկ բոլոր տեսակի և սելյոդկա,			
3. Կարտոֆել, բանջարեղեն և միրգ (տես ծանոթություն),			
4. Հացահատիկային ողի,			
5. Կոշկեղեն բոլոր տեսակի և կրկնակոշիկ։			
III ԽՈՒՄԲ	38	24	17
1. Ալյուր, կրուպա և մակարոն,			
2. Շաքար և շաքարավազ,			
3. Պատրաստի հագուստ, սպիտակեղեն և գլխարկներ,			
4. Բրդի, մետաքսի և այլ գործվածքներ (բրդի բամբակյա)։			
IV. ԽՈՒՄԲ	55	35	25
1. Կոնդիտերյան ապրանքներ,			
2. Թեյ բնական,			
3. Պահածոներ բոլոր տեսակի,			
4. Մարգարին,			
5. Գլանակներ և թութուն,			
6. Մախորկա (տես ծանրութիւնը)			
7. Տրիկոտաժ,			
8. Կահկարասիներ (մեբել).			
9. Պարենային ապրանքներ, բացի ուրիշ խմբերը մտցվածներից։			
V ԽՈՒՄԲ	70	55	35
1. Վոդկեկից խմիչքներ, բացի ողուց,			
2. Մետաղյա սամանեղեն, տնտեսական ապրանքներ և այլ մետ. իրեր,			
3. Կուլտ ապրանքներ,			

Ապրանքների խմբերը	Քաղաքային առևտրում	Գյուղական մանրածախս առևտրում	Գյուղակ. մեծաքան. առևտրում
4. Այլ վոչ պարենային ապրանքներ բացի ուրիշ խմբերը մտցվածներից։			
VI ԽՈՒՄԲ	85	30	42
1. Աղ,			
2. Լուցկի,			
3. Ոճառ լվացքի,			
4. Ոճառ ձեռքի և պարֆյումերիա,			
5. Գալանտերեյա,			
6. Միլիկատի ապրանքներ։			

Ծանոթություն.—Գյուղական առևտրական կազմակերպություններին (մեծաքանակ և մանրածախս) վարկավորելու՝ կերոսինը վարկավորվում է ապրանքային յուրաքանչյուր խմբի ժամկետների համաձայն, մախորկան՝ ապրանքային հինգերորդ խմբի ժամկետների համաձայն։ Կարտոֆիլը, բանջարեղենը և մրգերը գյուղում չեն վարկավորվում։

Աշխատանքի ու պաշտպանության Խորհրդի քարտուղարի փոխարեն Ի. ԲՈԼՇԱԿՈՎ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մոսկվա-Կրեմլ
№ 1234 11-ն հուլիսի 1936 թվ.

ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՄԱՆԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Հաստատել Գետական Բանկի կողմից ներկայացված հրահանգները՝ «Առևտրի վարկավորման մասին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թ. վորոշման» և «Այլքաղաքային ակցեպտի և ներքաղաքային հաշվարկների կարգի մասին» (տես հավելվածներ № 1 և № 2).

2. Առաջարկել Գետական Բանկին և Ցենտրոսոյուզին 1936 թվ. նոյեմբերի 15-ին ներկայացնել իրենց առաջարկությունները գյուղկոոպներին վարկավորման անցկացնելու ժամկետի մասին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հուլիսի 1936 թ. վորոշման։

3. Թույլատրել Գետական Բանկին տալ առևտրական կազմակերպություններին արտապլանային փոխառություններ՝ հաստատված հրահանգին համապատասխան (հոդ. 1), 50 միլ. սահմաններում (1936 թվ. III յեռամսյակում).

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վ. ՉՈՒԲԱՐ.

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ.

ԽՍՀ Միության ԺԿԽ 11—VII—36 թվ.
№ 1234 վորոշման № 1 հավելվածը.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՀՐԱՀԱՆԳԸ

ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺԿԽ 1936 Թ. ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ՎՈՐՈՇՄԱՆ

I ՄԱՍ.—Ապրանքների վճարման մեջ առևտրական կազմակերպությունների սեփական միջոցների մասնակցության չափի սահմանումը.

1. Ամեն մի առևտրական կազմակերպության համար, վորն անցկացվում է վարկավորման համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. 4-ն հունիսի վորոշման, սահմանվում է սեփական միջոցների մասնակցության այն պարտադիր չափը, վորը նա պետք է ունենա ապրանքների վճարման մեջ։

2. Սեփական միջոցների մասնակցության պարտադիր չափը յուրաքանչյուր յեռամսյակում սահմանում է Գետական Բանկի հանրապետական, յերկրային և մարզային գրասենյակը՝ համաձայնեցնելով այդ առևտրական սիստեմների համապատասխան կենտրոնի հետ։

3. Ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների մասնակցության նվազագույն չափը պետք է կազմի.

ա) Գետառևտրի կազմակերպությունների և ՈՐՄ-երի համար 30%,

բ) Շրջսպառկոոպմիությունների, Շրջկոոպների, շինությունների պահեստի և կուլտխանությունների համար 20%,

գ) Հանրապետական սպառկոոպմիության մեծաքանակ բազաների և շրջխանությունների համար 15%

4) Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային դրասենյակը սահմանում է սեփական միջոցների մասնակցության նվազեցված չափ այն առևտրական կազմակերպությունների համար, վորոնք դեռ ևս չեն կարողացել կուտակել սեփական միջոցներ այն չափով, վորն անհրաժեշտ է 3 հոդվածում նշված մինիմումը լրացնելու համար։ Սեփական միջոցների մասնակցության այդ նվազեցումը, սակայն, կատարվում է այն հաշվով, վորպեսզի այդ մասնակցությունը չլինի ավելի ցածր սեփական միջոցների այն նորմատիվից, վորը գործելիս է յեղել առևտրական կազմակերպությանը վարկավորման անցկացնելու պահին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. վորոշման։

Մտնոթություն.— Այն կազմակերպությունների համար, վորոնք որենքով թույլատրված սահմաններում կատարում են ապրանքների գնումները իրենց վաճառքից ստացված գումարից, սեփական միջոցների մասնակցության չափը նվազեցվում է 2—3 տոկոսով։

II ՄԱՍ.— Վարկավորման կարգը.

5. Պետական Բանկը առևտրական կազմակերպության համար բացում է հատուկ փոխատվության հաշիվ և այդ հաշվից հատուցում է վճարման պահանջագրերը, վորոնք ակցեպտի յեն յենթարկված առևտրական կազմակերպության կողմից, հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները, վորոնք տրված են ապրանքների դիմաց։

6. Վեց որը մեկ անգամ առևտրական կազմակերպությունը ներկայացնում է Պետական Բանկին մեկ ռեեստր, վորտեղ նշվում են անցած վեցորյակում հատուցված վճարման պահանջագրերը, հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները՝ խմբավորված վարկավորման ժամկետներով (վարկավորման ժամկետների սահմանված շրջանավորման համաձայն)։

Ապրանքների ամեն մի խմբի դիմաց, վորի համար ռեեստրի մեջ ցույց է տրված վարկավորման հատուկ ժամկետ, առևտրական կազմակերպությունը տալիս է Բանկին ժամկետային պարտավորագիր Բանկի կողմից հատուցված վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի և վճարման հանձնարարությունների գումարով՝ դուրս գալով սեփական միջոցների մասնակցու-

թյան սահմանված մասը։ Պարտավորագրերի ժամկետները վորոշվում են հաշվելով վեցորյակի յերկրորդ որից։

7. Պետական Բանկ մուտք յեղվող առևտրական կազմակերպության շրջանառությունից զոյացած գումարները, դուրս գալով առևտրական հավելումը, գրվում են առևտրական կազմակերպության հատուկ փոխատվության հաշվին՝ Բանկին տրված ժամկետային պարտավորագրերի հանդեցման համար, ինչպես և սեփական միջոցների մասնակցության դիմաց։

Առևտրական հավելման գումարը գրվում է առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվին ամեն որ կամ այն ժամկետներով, վորոնք կսահմանվեն Բանկի և առևտրական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ։

8. Վեց որը մեկ անգամ Պետական Բանկը կատարում է կազմակերպության հետ հաշվարկ բոլոր այն գործարքների համար, վորոնք կատարվել են հատուկ փոխատվության հաշվի միջոցով անցած վեցորյակի ընթացքում։

Հատուկ փոխատվության հաշվին մուտք յեղած առևտրից ստացված գումարի մի մասը, վորը համապատասխանում է ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների սահմանված չափին ընդունվում է նրանց մասնակցության դիմաց։

Առևտրից ստացված գումարի մյուս մասը, վորը համապատասխանում է բանկային վարկի չափին, գնում է Բանկին տրված այն պարտավորագրերի մարման դիմաց, վորոնք ունեցել են ժամկետներ անցած վեցորյակում։

Հայի վաճառքից զոյացած գումարը և հայի դիմաց ստացված հաշիվների վճարումը անցկացվում հատուկ փոխատվության հաշվով։

9. Յեթե առևտրից ստացված գումարի այն մասը, վորը գնում է սեփական միջոցների մասնակցության դիմաց, ավել է, քան պահանջվում եր՝ յելնելով վեցորյակում ստացված վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների գումարից, այդ դեպքում առևտրական կազմակերպության հատուկ փոխատվության հաշվում առաջացած ազատ մնացորդը փոխանցվում է նրա հաշվարկային հաշվին։

Յեթե առևտրից ստացված գումարի այն մասը, վորը գնում է սեփական միջոցների մասնակցության դիմաց, քիչ է, քան պահանջվում եր՝ յելնելով վեցորյակում հատուցված վճարման

պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների գումարից, այդ դեպքում Բանկը պակասող գումարը գանձում է առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվից կամ, հաշվարկային հաշվում գումարներ չլինելու դեպքում, դնում է ժամկետանցի տակ։

10. Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը դնում է ժամկետային պարտավորագրերի վճարման դիմաց, ավել է այն պարտավորագրերի գումարից, որոնք ունեցել են ժամկետներ անցած վեցօրյակում, այդ դեպքում Բանկը պարտավոր է առևտրական կազմակերպության պահանջի համաձայն՝ ազատ գումարի չափով հատուցել նրան ուղարկված վճարման պահանջագրերն առանց սեփական միջոցների մասնակցության, համապատասխան կարգով ձևակերպելով ժամկետային պարտավորագրերը։

Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը դնում է ժամկետային պարտավորագրերի վճարման դիմաց, պակաս է այն պարտավորագրերի գումարից, որոնք ունեցել են ժամկետներ անցած վեցօրյակում, այդ դեպքում բանկը պակասող գումարը գանձում է հաշվարկային հաշվից կամ դնում է ժամկետանցի տակ։

III ՄԱՍ — Վարկավորումը յեռամյակային պլանի գերակատարման դեպքում

11. Այն դեպքում, յերբ գերակատարվում է ապրանքաշրջանառության համապատասխան ամսվա պլանը, որը սահմանված է առևտրական կազմակերպության համար յեռամյակային պլանի սահմաններում, Պետական Բանկը վարկավորում է ապրանքների լրացուցիչ գնումները, որոնք անհրաժեշտ են պլանից ավելի կատարված համապատասխան շրջանառության համար, չպահանջելով առևտրական կազմակերպությունից սեփական միջոցների մասնակցություն ապրանքների վճարման մեջ։

Պլանից ավելի կատարված շրջանառությունը վարկավորվում է հետևյալ կարգով. այն դեպքում, յերբ առևտրական կազմակերպությունը ընթացիկ ամսում գերակատարում է ապրանքների վաճառքի սահմանված պլանը, Բանկը հետևյալ ամսում, վարկավորելով ապրանքների պլանային գնումներն առևտրական կազմակերպության սեփական միջոցների մասնակցության պայմաններով, միաժամանակ վարկավորում է առանց սեփական միջոցների մասնակցության պլանից ավելի կատարվող ապրանքների գնումները (նախորդ ամսում պլանից ավելի կատարված վաճառքի սահմաններում)։

Ծանոթություն.—Յեռամսյակային առևտրական պլանի բաշխումն ըստ ամիսների ամեն մի առևտրական կազմակերպության համար կատարում է նրա վերադաս ղեկը։

IV ՄԱՍ — Վարկավորման շերտավորված ժամկետների սահմանման կարգը

12. Պետական Բանկի բաժանմունքը սահմանում է առևտրական կազմակերպությունների համար, որոնք անցնցնկացված վարկավորման՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. որոշման, վարկավորման շերտավորված ժամկետներ հետևյալ կարգով.

ա) Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակը հայտնում է իր բաժանմունքներին տարբեր ապրանքային խմբերի շրջանառության արագության ժամկետները, որոնք սահմանվում են համապատասխան առևտրական կազմակերպությունների համար այն կարգով, որը նախատեսված է Ս.Պ.Խ 11-ն հուլիսի № 284 որոշումով՝ «Առևտրական կազմակերպությունների վարկավորման շերտավորված ժամկետների մասին»։

բ) Պետական Բանկի բաժանմունքը որոշում է վարկավորման ժամկետները տարբեր ապրանքների վճարման համար՝ համաձայն այդ ապրանքների շրջանառության արագության այն ժամկետների, որոնք սահմանված են տվյալ առևտրական կազմակերպության համար, հանելով 7 որ այլքաղաքային շրջանառության դեպքում և 4 որ՝ ներքաղաքային շրջանառության դեպքում.

Հացամթերքների, նավթամթերքների և ածուխ համար փոխառությունները տրվում են այդ ապրանքների շրջանառության արագության ամբողջ ժամկետով։

V ՄԱՍ.—Վերահսկողությունն ու սանկցիաները.

13. Պետական Բանկը պարտավոր է պարբերաբար հետևել առևտրական կազմակերպության կողմից վարկավորման այն

պայմանների կատարմանը, վորոնք սահմանված են ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. վորոշումով, այսինքն՝

ա) աշխատանքի շահավետության նկատմամբ,

բ) տեխնիկական միջոցների մասնակցության նկատմամբ,

գ) Բանկին տրված ժամկետային պարտավորագրերի պարտադիր մարման նկատմամբ։

14. Ցուցաքանչյուր յեռամսյակ, հաշվետու յեռամսյակի սկզբի և վերջին բալանսներով, Պետական Բանկը ստուգում է առևտրական կազմակերպության գործունեության հետևանքները ամբողջ յեռամսյակում։

Յեթե առևտրական կազմակերպությունը վերջին յեռամսյակում ավել է ելնում, այդ դեպքում Բանկը դադարեցնում է նրան փոխատվություններ տալը։

Այդ դեպքում վարկավորումը վերսկսվում է հետևյալ յեռամսյակային շահավետ բալանսի ներկայացնելուց հետո։

Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակի կառավարիչը կարող է թույլատրել վարկավորման վերսկսումը նաև մինչև հետևյալ յեռամսյակային շահավետ բալանսի ներկայացնելը, յեթե վերադաս առևտրական կազմակերպությունը (հանրապետական, յերկրային կամ մարզային պետառևտրի կենտրոնը կամ սպառողական կոոպերացիայի միությունը) տա անհրաժեշտ յերաշխավորություն՝ ելնասարքության պատճառների վերացման և բանկային վարկի ապահովության մասին։

15. Յեթե առևտրական կազմակերպությունը խախտում է ապրանքների վճարման մեջ տեխնիկական միջոցների մասնակցության կանոնը, այդպիսի դեպքում Պետական Բանկն իրավունք ունի նրան անցկացնել ամենորյա մասնակցության ապրանքները վճարման մեջ (մեկ ամիս ժամկետից վոչ ավելի)։

16. Այն դեպքերում, յերբ առևտրական կազմակերպությունն իր ժամկետային պարտավորագրերը չի վճարել նշանակված ժամկետին, Բանկը պարտավոր է ժամկետանց պարտավորագրերի գումարը անցկացնել ժամկետանց փոխատվությունների հաշվին և գանձել այդ գումարը բոլոր առաջիկա մուտքերից, կատեգորիզացիայով վճարման պարտավորագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների հատուցումները հատուկ փոխատվության հաշվից։

Առևտրական կազմակերպությունը ժամկետանց փոխատվություն ունենալու դեպքում Բանկն իրավունք չունի տալ նրան նոր փոխատվություններ՝ մինչև ժամկետանց պարտավորագրերի լրիվ մարումը։

17. Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակի կառավարիչը կարող է վարկավորումից հանել։

ա) հանրապետական և տեղական նշանակություն ունեցող կազմակերպություններին՝ համապատասխան հանրապետական, յերկրային կամ մարզային առևտրական կենտրոնին այդ մասին հայտնելուց 5 որ հետո,

բ) միութենական նշանակություն ունեցող առևտրական կազմակերպություններին՝ միմիայն Պետական Բանկի վարչության նախագահի թույլտվությամբ։

18. Պետական Բանկի բաժանմունքները պարտավոր են սիստեմատիկորեն հետևել վորպեսզի առևտրական կազմակերպությունները յուրաժամանակ և լրիվ կերպով հանձնեն Բանկին առևտրից ստացված գումարները՝ համաձայն ԱՊՆ 17-ն հուլիսի 1932 թվ. № 836 վորոշման, հաշվի առնելով մանր-մեծաքանակ գնումների համար անհրաժեշտ գումարների ծախսման նորմաները, վորոնք սահմանված են ԽՍՀ Միության ԺԿԽ 5-ն հունվարի 1936 թվ. վորոշման 13 հոդվածով (տես՝ ԽՍՀ Միության Որենք. ժող. 1936 թվ. № 2, հոդ. 19)։

VI ՄԱՍ.—Արտապլանային փոխատվություններ.

19. Յեթե շահավետ աշխատող կազմակերպությունը ունեցել է ժամանակավոր դժվարություններ ապրանքների անհամաչափ ներմուծման կամ վաճառքի անհամաչափ ընթացքի հետևանքով, Պետական Բանկի բաժանմունքի կառավարիչը արտադրում է նրան արտապլանային փոխատվություն 10—15 որ ժամկետով։

20. Պետական Բանկի վարչությունը սահմանում է իր հանրապետական, յերկրային ու մարզային գրասենյակի համար, իսկ վերջիններն՝ իրենց բաժանմունքների համար արտապլանային փոխատվությունների լիմիտներ։

VII ՄԱՍ.—Առեվտրի վարկավորման լիմիտները.

21. Ամեն մի առանձին առևտրական կազմակերպության համար վարկավորման կայուն լիմիտներ սահմանելու գործությունն ունեցած կարգը վերացվում է։

Առևտրական կազմակերպությունների վարկավորման ընդհանուր չափը սահմանվում է Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի կողմից՝ յուռամսյակներով ամբողջ Պետական Բանկի համար։ Պետական Բանկի վարչությունն առևտրական կազմակերպությունների վարկավորման չափերը սահմանում է ըստ իր հանրապետական, յերկրային ու մարզային գրասենյակների, իսկ վերջիններն՝ ըստ իրենց բաժանմունքների։

Պետական Բանկի բաժանմունքն առևտրական կազմակերպությունների համար լրացուցիչ վարկի պահանջ ունենալու դեպքում՝ վարկի ավելացման խնդիրը լուծում է Պետական Բանկի համապատասխան գրասենյակը, իսկ հանրապետության, յերկրի կամ մարզի բոլոր առևտրական կազմակերպությունների համար ամբողջովին վերցրած վարկի լրացուցիչ պահանջ ունենալու դեպքում՝ վարկի ավելացման խնդիրը լուծում է Պետական Բանկի վարչությունը։

VIII ՄԱՍ.—Առեվտրական կազմակերպություններին վարկավորման նոր կարգին անցկացնելու կարգը՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. վորոշման.

22, Պետական Բանկի բաժանմունքների և առևտրական կազմակերպությունների ցուցակը, վորոնք 1936 թվ. ոգոստոսի 1-ից անցենկացվում վարկավորման՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. վորոշման, կազմում է Պետական Բանկի վարչությունը՝ համաձայնեցնելով ԽՍՀ Միության Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի, Ցենտրոսոյուզի և տնտեսական ժողկոմատների Գլխավոր սերի հետ։

23. Հետագայում՝ Պետական Բանկի բաժանմունքները վարկավորման նոր կարգն առանձին առևտրական կազմակերպությունների համար կիրառում են Պետական Բանկի վարչության թույլտվությամբ, վորը համաձանեցվում է ԽՍՀ Միության Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի, Ցենտրոսոյուզի և տնտեսական ժողկոմատների Գլխավոր սերի հետ։

24. Այն առևտրական կազմակերպությունների համար, վորոնք չեն անցկացված վարկավորման նոր կարգին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 4-ն հունիսի 1936 թվ. վորոշման, ամբողջովին պահպանվում է վարկավորման այն կարգը, վորը սահմանված է ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. 16-ն ոգոստոսի վորոշումով (Տես՝ ԽՍՀ Միության Որենք. Ժող. 1933 թվ. № 55, հոդ. 326)։

Այդպիսի կազմակերպությունները Բանկի կողմից վարկավորվում են կայուն լիմիտի սահմաններում՝ հաշվի առնելով տեսչական միջոցների սահմանված նորմատիվը և միջին ժամկետով։

ԽՍՀ Միության Պետական Բանկի վարչության
նախագահ՝ Լ. ՄԱՐԻԱՍԻՆ

ԽՍՀ Միության ժող. 11-VII-36 թվ.
№ 1234 վարչության № 2 հավելվածը.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀՐԱՀԱՆԳԸ

ԱՅԼԲԱՂԱՔԱՅԻՆ ԱԿՑԵՊՏԻ ՅԵՎ ՆԵՐԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Այլբաղաքային ակցեպտով կատարվող հաշվարկների դեպքում մատակարարը ներկայացնում է գնորդին վճարման պահանջագիր ապրանքների ու ծառայությունների համար՝ Պետական Բանկի միջոցով ինկասսո կարգով, եթե պակաս 1.000 առաջու գումարի պարունակությամբ։

Այն վճարման պահանջագրերը, որոնք պարունակում են 1.000 ռ. պակաս գումար, Պետական Բանկն ընդունում է ինկասսո համաձայնության գալով շահագրգռված հաստատությունների հետ։

Վճարման պահանջագրին կցվող փաստաթղթերը (հաշիվ-ֆակտուրաները, ապակցիֆիկացիաները, տրանսպորտային և այլ փաստաթղթերը) մատակարարն ուղարկում է անմիջականորեն գնորդին։ Կապիտալ շինարարության համար դուրս գրվող վճարման պահանջագրերին կցվում են հաշիվ-ֆակտուրաները։

2. Գնորդը պարտավոր է, Բանկի կողմից վճարման պահանջագրի ստանալուց 3 օրվա ժամկետում, ստուգել իրեն ներկայացված մատակարարների վճարման պահանջագրերը՝ նրանց ուղարկված հաշիվ-ֆակտուրաների և մյուս փաստաթղթերի հետ միասին։

Այն դեպքերում, երբ գնորդն ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվում է վճարման պահանջագրի ակցեպտից, նա պարտավոր է այդպիսի մերժման մասին հայտնել Բանկի, սպասարկող բաժանմունքին՝ Բանկի կողմից վճարման պահանջագրի ստացումից 3 օրվա ընթացքում։ Բանկը կարող է յերկարացնել այդ ժամկետը նայած կապի պայմաններին այն գնորդի համար, որը գտնվում է քաղաքի սահմաններից դուրս։

Այն վճարման պահանջագրերը, որոնց մասին սահմանված ժամկետի ընթացքում չի ստացվում գնորդի հայտարարությունն ակցեպտից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու մասին, համարվում է ակցեպտ արված։

3. Գնորդն իրավունք ունի վճարման պահանջագրերը լրիվ գումարով ակցեպտ անելուց հրաժարվել հետևյալ դեպքերում.

ա) յերբ վճարման պահանջագիրը ներկայացված է չպատվիրված ապրանքի համար,

բ) այն բոլոր դեպքերում, որոնք չեն նախատեսված արենքով կամ մատակարարի ու գնորդի միջև կնքված պայմանագրով։

4. Գնորդն իրավունք ունի վճարման պահանջագիրը մասնակի ակցեպտ անելու այն դեպքերում, յերբ.

ա) վճարման պահանջագրի մեջ բաց է թողնված թվաբանական սխալ,

բ) վճարման պահանջագրի մեջ դերազանցված են այն գներ, հավելումները կամ մարժաները, որոնք նախատեսված են պայմանագրերով ու գնացուցակով (պրեյսկուրանտով) կամ արենքով սահմանված այլ կարգով,

գ) մատակարարն ուղարկել է ապրանք այն քանակով, որը որոշված է պլանով կամ պայմանագրով ավելի յեռամյակի կամ ամսվա (յեթե ամսական քանակը նախատեսված է պայմանագրում) համար,

դ) մատակարարը պատվիրված ապրանքի հետ միասին ուղարկել է այնպիսի ասորտիմենտի և արտիկուլի ապրանք, որը չի պատվիրված գնորդի կողմից։

5. Գնորդը չի կարող ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվել վճարման պահանջագրի ակցեպտից այն ժամկետից հետո, որը նշված է 2-րդ հոդվածում։

6. Գնորդը պարտավոր է վճարել այլբաղաքային հաշվարկի վճարման պահանջագրերը վոչ ուշ, քան Բանկի սպասարկող բաժանմունքի կողմից վճարման պահանջագրի ստանալուց 10 օր հետո։

7. Պահպանել հաշվարկի գոյություն ունեցող այն կարգը, որը կիրառվում է հացամթերքների, հացահատիկային տուս, նավթամթերքների նկատմամբ, բյուջետային ու հասարակական կազմակերպությունների մատակարարումների համար, արտադրական ձեռնարկությունների և համապատասխան վճառառանման

այն կազմակերպությունների համար, որոնց միջոցով նրանք իրա-
գործում են իրենց արտադրանքը, ինչպես և այն կարգը, որի
համաձայն կատարվում են հաշվարկները կապալառուների և
պատվիրատուների միջև կապիտալ շինարարության կատարված
աշխատանքների համար։

8. Ապրանքը մտնում է գնորդի տրամադրության տակ
վճարման պահանջագիրը ակցեպտի յենթարկելու մոմենտից հետո։
Կապիտալ շինարարության մատակարարումների համար ապրան-
քը մտնում է գնորդի տրամադրության տակ հատուկ—Բանկի
կողմից վճարման պահանջագիրը հատուցման ընդունելու մոմենտ-
ից հետո։

Ցերբ գնորդը հրաժարվում է ակցեպտից՝ ապրանքը մնում
է գնորդի պատասխանատու պահպանման տակ։ Մասնակի ակ-
ցեպտի դեպքում՝ ապրանքը մնում է գնորդի պատասխանատու
պահպանման տակ այն մասով, որի վճարումից գնորդը հրա-
ժարվել է։

Մանրություն.—Եթե հաշվի մասնակի ակցեպտը կա-
տարվում է վճարման պահանջագրում թույլ տրված գնե-
րի գերազանցման կամ թվաբանական սխալի հետևան-
քով՝ ապրանքը մնում է գնորդի տրամադրության տակ
ամբողջովին։

9. Այն գնորդը, որը ապրանքը ստացել է Բանկի կողմից
վճարման պահանջագիրը ստանալուց առաջ և ոգտագործել է այդ
ապրանքը, իրավունք չունի ամբողջովին հրաժարվելու վճարման
պահանջագրի ակցեպտից։ Այդ դեպքում գնորդն իրավունք ունի
հրաժարվելու ակցեպտից միմիայն մասնակիորեն։

10. Բանկը կարող է զրկել այն գնորդներին, որոնք հա-
ճախակի չեն կատարում վճարումներ, ապրանքների վրա մինչև
նրանց վճարումը կարգադրություն անելու իրավունքից։ Այդ-
պիսի դեպքերում՝ ապրանքը մնում է գնորդի պատասխանատու
պահպանման տակ։

Գնորդին չվճարված ապրանքների վրա կարգադրություն
անելու իրավունքից զրկելու մասին բանկը իրազեկ է դարձնում
ինչպես գնորդին, նույնպես և այն վերադաս կազմակերպությանը,
որի իրավասության տակ գտնվում է գնորդը։

11. 8-րդ և 10-րդ հոդվածներում նշված դեպքերում ապ-
րանքը մնում է գնորդի պատասխանատու պահպանման տակ

մինչև ապրանքի վճարումը կամ մինչև Բանկի կողմից մատակա-
րարի կարգադրության ստացումը ապրանքի հետագա ճանապարհ-
ման մասին։

12. Գնորդը պարտավոր է Բանկի պահանջի համաձայն ներ-
կայացնել նրա այն հաշիվ-ֆակտուրաները, սպեցիֆիկացիանե-
րը և ուրիշ փաստաթղթերը, որոնք ստացվել են մատակարարից
պատասխանատու պահպանման մնացած ապրանքների համար։

13. Հաշվարկները տնտեսարմինների միջև ըստ ներքաղա-
քային շրջանառության կատարվում են՝

ա) Մինչև 1,000 ռուբլի գումարի համար՝ կանխիկ դրամով,
հաշվարկային չեկերով կամ վճարման հանձնարարություններով։
100 ռուբլուց պակաս գումարի հաշվարկային չեկերը և վճարման
հանձնարարությունները Բանկը չի ընդունում։ Գեսբանկի գրա-
սենյակներին իրավունք է վերապահվում բարձրացնել այդ նվա-
զագույն չափը՝ յելնելով տեղական պայմաններից՝ մինչև 500
ռուբլու։

բ) 1,000 ռուբլուց ավելի գումարի համար՝ մատակարար-
ների կողմից իրենց Բանկի սպասարկող բաժանմունքին գնորդ-
ների կողմից ակցեպտի յենթարկված վճարման պահանջագրերի
ներկայացնելու կարգով։

Ներքաղաքային հաշվարկներն ըստ կապիտալ շինարարու-
թյան կատարվում են Բանկին վճարման պահանջագրերի ներ-
կայացման այն կարգով, որը սահմանված է այլքաղաքային
հաշվարկների համար։

14. Գնորդը պարտավոր է վճարել իր կողմից ակցեպտի
յենթարկված վճարման պահանջագրերն ըստ ներքաղաքային
շրջանառության վոչ ուշ, քան մատակարարի կողմից այդպիսին
բանկին ներկայացնելուց հետո 4 որվա ընթացքում։

Միանվագ գնումների համար մատակարարն իրավունք ու-
նի պահանջելու գնորդից (յեթե գնորդը չի հանդիսանում առևտ-
րական կազմակերպություն) անմիջապես վճարել ապրանքի դի-
մաց հաշվարկային չեկով կամ վճարման հանձնարարությունով։

Հաշվարկներն ըստ ներքաղաքային շրջանառության այն
ապրանքների համար, որոնք նշված են 7-րդ հոդվածում, ինչ-
պես և հացաթխող կազմակերպությունների հաշվարկներն առևտ-
րական կազմակերպությունների հետ թխված հացի համար՝
կատարվում են այն կարգով, որը կիրառվում է մինչև սույն
հրահանգի հրատարակությունը։

15. Այլքաղաքային շրջանառության համար վճարման պահանջագիրը ժամկետին չվճարելու մասին Բանկն ուղարկում է ծանուցագիր մատակարարին։

Յեթե գնորդը ներկա հրահանգի 10-րդ կետի կարգով զրկված է իրավունքից կարգադրություններ անելու ապրանքի վրա մինչև նրա վճարումը և ապրանքը թողնված է նրա պատասխանատու պահպանման ակ, այդ դեպքում Բանկն այդ մասին հայտնում է մատակարարին՝ ապրանքի չվճարման մասին ծանուցագիր ուղարկելու հետ միաժամանակ։

16. Այն դեպքում, յերբ գնորդը չունի ժամկետին չհատուցված վճարման պահանջագիր և չկա նրա հաշվի վրա կալանք ուրիշ պատճառներով, գնորդն իրավունք ունի մինչև վճարման ժամկետը գալը հատուցել նրան ներկայացված վորևե ուրիշ վճարման պահանջագիր իր սեփական ընտրությամբ։

17. Պետական Բանկը տրամադրում է մատակարարին փոխատվություններ ճանապարհին յեղած փաստաթղթերի դիմաց հետեվյալ հիմունքներով.

ա) այլքաղաքային շրջանառության համար ճանապարհին յեղած փաստաթղթերի դիմաց փոխատվությունները տրամադրվում են մատակարարներին փաստաթղթերի նորմալ պտույտի ժամկետով։ Այն դեպքում, յերբ վճարման պահանջագիրը հատուցվում է մինչև ժամկետն անցնելը, Բանկը փոխատվությունը հետ է գանձում ժամկետից շուտ։

Յեթե փոխատվության ժամկետի անցնելու պահին Բանկը չի ունենում իր բաժանմունքից տեղեկություն այն մասին, թե գնորդը չունի միջոցներ կամ գնորդը հրաժարվում է ակցեպտից, այդ դեպքում Բանկը փոխատվությունը հետ է գանձում՝ գնորդից վճարված գումարը ստացվելուն զուգընթաց կամ չվճարման պատճառի մասին իր բաժանմունքից տեղեկություն ստացվելուց հետո։

Այն դեպքում, յերբ ստացվում է Բանկի բաժանմունքից տեղեկություն ակցեպտից հրաժարվելու մասին կամ գնորդի միջոցներ չունենալու մասին, տրված փոխատվության հետ գանձումը Բանկը կատարում է փոխատվության ժամկետն անցնելուց հետո։

բ) Ներքաղաքային շրջանառության համար ճանապարհին յեղած փաստաթղթերի դիմաց փոխատվությունները տրամադրվում են 4 որվա ժամկետով, ներառյալ այդ ժամկետի մեջ նաև հաշիվների ձեվակերպումը Բանկում։

18. Բանկի բաժանմունքները պարտավոր են ուղարկել տեղեկություն չվճարման մասին կամ ակցեպտից գնորդի հրաժարման մասին 24 ժամվա ընթացքում։ Բանկի այն աշխատակիցներից, վորոնք մեղավոր են տեղեկության ձգձգման մեջ, գանձվում է տուգանք։ Տուգանքի չափն ու գանձման կարգը սահմանվում են ԽՍՀ Միության Ֆինժողկոմատի կողմից։

19. Այն լրացուցիչ միջոցները, վորոնք առաջանում են ոնտամարմնի մոտ մատակարարների կողմից վճարումների ժամկետի յերկարացման կապակցությամբ, Բանկը հաշվառում է վարկավորման ժամանակ հետեվյալ կարգով.

ա) Առևտրական կազմակերպությունների համար՝ վճարումների ժամկետների յերկարացումը հաշվառվում է ապրանքաշրջանառության դիմաց տրվող փոխատվությունների ժամկետների կրճատման ճանապարհով,

բ) Սեղոնային կուտակման նյութական արժեքների դիմաց վարկավորվող ոնտամարմինների համար՝ վարկի չափը կրճատվում է Բանկի կարտոտեկայում գտնվող ակցեպտի յենթարկված ժամկետային վճարման պահանջագրերի գումարով։

ԽՍՀ Միության Պետական
Բանկի նախագահ՝ Լ. ՄԱՐՑԱՍԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մոսկվա—Կրեմլ

№ 1306, 20-ն հուլիսի 1936 թվ.

ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

Ի փոփոխություն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի «Ապրանքաշրջանառության վարկավորման սիստեմը փոփոխելու մասին» վորոշման 13-րդ հոդվածի (տես՝ ԽՍՀ Միության Որենք. Ժող. 1936 թվ., № 31, հոդ. 278)՝ ապրանքաշրջանառության և վարկավորման նոր կարգը կիրառել 1936 թվ. սեպտեմբերի մեկից։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ Վ. ՉՈՒԲԱՐ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

№ 1421 5—VIII—1936 թվ.
Բաղվածք № 8 արձանագրությունից.

ԽՍՀՄ ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի «Ապրանքաշրջանառության վարկավորման սիստեմի փոփոխման մասին» վորոշումը լրացնելու մասին.

Ի լրումն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի «Ապրանքաշրջանառության վարկավորման սիստեմի փոփոխման մասին» վորոշման՝ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Այն ապրանքների նկատմամբ, վորոնք գտնվում են զբոսորդի պատասխանատու պահպանման տակ, մատակարարները կարող են տալ Բանկին հանձնարարություններ՝ ապրանքներն ուրիշ, վորոշ տնտեսակազմակերպության հանձնելու մասին կամ նրանց Բանկի միջոցով վաճառելու մասին։

Ապրանքների վաճառքը մատակարարի հանձնարարությամբ Բանկի բաժանմունքները կատարում են ինքնուրույն կերպով.

Մանրություն.—Բանկի բաժանմունքների կողմից տնտեսարմիններին պատկանող ապրանքների վաճառքը ժամկետանց փոխատվությունները հետ գանձելու համար կատարվում է բացառապես Պետբանկի վարչության նախագահի թույլտվությամբ։

2. Մատակարարների կողմից ակցեպտի յենթարկված, բայց ժամկետին չհատուցված, վճարման պահանջագրերը ստանում են կատարողական փաստաթղթի ուժ վճարման ժամկետը հասնելուց հետո։

3. Այն խնդիրը, որը վերաբերվում է վճարման պահանջագրի ակցեպտից գնորդը լրիվ կամ մասնակի հրաժարվելու հիմնավորմանը, քննվում է արբիտրաժի կամ դատարանի կողմի որևէ կողմի հայցի համաձայն։

4. Ակցեպտի յենթարկված վճարման պահանջագրի հատուցումը ժամկետանցի յենթարկելու համար գնորդը վճարում է մատակարարին տույժ՝ ժամկետանցված վճարման գումարից 0.1%-ի չափով ամեն մի ժամկետանց օրվա համար, ընդունելով նվազագույն գումարը 10 ռուբլի։

1936 թվ. նոյեմբերի 1-ից տույժը Բանկի կողմից գանձվում է վճարման պահանջագրի հատուցման հետ միաժամանակ։

Վճարումների ժամկետանցի համար գանձվող տույժի ուրիշ չափերը, որոնք նախատեսված են տնտամարմինների պայմանագրերում, 1936 թվ. նոյեմբերի 1-ից վերացվում են։

ԽՍՀՄ Միության Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վ. ՉՈՒԲԱՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0193280